Ֆրանսիան «ընտրել է» Հայաստանը

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 21.01.2024թ.

19.01.2024 թ. Ֆրանսիայի նախագահի՝ բանակին ուղղված ավանդական ամենամյա ուղերձի ժամանակ Էմանուել Մակրոնն ասել է, որ Ֆրանսիայի Հանրապետությունը պատմական ընտրություն է կատարել հատկապես Հայաստանի առնչությամբ: Նա մասնավորապես նշել է. «*2024 թվականին մենք անխոնջ կերպով կապահովենք մեր անդրծովյան տարածքների պաշտպանությունը և կբախվենք այն պարտավորություններին, որոնք կրում ենք մենք՝ մեր մեծ ազգը: Այստեղ ես զերծ կմնամ դրանք մանրամասն թվարկելուց: Ես կարող էի նշել Բալկանները, Հայաստանը, որոնք գրավում են մեր ուշադրությունը և հանգեցնում մեր դիրքերի ամրապնդմանը և, ինչպես նոր նշեցի, հատկապես Հայաստանին վերաբերող պատմական որոշումների կայացմանը*»:

Ըստ ամենայնի, համաշխարհային հարթակում Փարիզի ռազմավարական խնդիրների համատեքստում 2024 թ. միայն Հայաստանի և Բալկանների հիշատակումը վկայում է այս երկու ուղղությունների առաջնահերթության մասին: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ակնհայտ է, որ ՖՀ-ն չի ցանկանում բաց թողնել իր համար հաջողությամբ ձևավորվող իրավիճակը, երբ Երևանը վերջին տարիների իրադարձությունների պատճառով հայտնվեց ադրբեջանա-թուրքական սպառնալիքի առջև, բայց, միևնույն ժամանակ, ակնհայտորեն ազդարարում է իր անվստահությունը Հարավային Կովկասի անվտանգության՝ Մոսկվայի կողմից առաջարկվող, ճարտարապետության նկատմամբ: Ներկա պայմաններում ֆրանսիական դիվանագիտությանը հաջողվեց առանց մեծ ծախսերի և ջանքերի ապահովել Հայաստանի կառավարության և հանրային համակրանքի զգալի աճ Ֆրանսիայի և իր վարած տարածաշրջանային քաղաքականության նկատմամբ: Այս հաջողությունը պետք է ամրապնդվի, ինչն էլ Փարիզը հետևողականորեն կանի՝ ընդլայնելով կապերը Երևանի հետ՝ հատկապես շեշտը դնելով պաշտպանության ոլորտի վրա:

Ինչ վերաբերում է Բալկաններին, ապա Մակրոնը դրանց մասին հիշեցնելով, ամենայն հավանականությամբ, ընդգծել է Ֆրանսիայի մտադրությունները՝ Հունաստանի և Կիպրոսի հետ ավելի խորացնելու դաշնակցային հարաբերությունները, որոնց արդյունքում վերջին մի քանի տարիների ընթացքում էապես հավասարակշռված իրավիճակ է հաստատվել Միջերկրական ծովի Արևելքում՝ մեղմելով այստեղ Թուրքիայի ախորժակն ու ագրեսիվ պահվածքը:

Մակրոնի «հայ-բալկանյան ռազմաքաղաքական առաջնահերթության» մասին հայտարարությունը լայն իմաստով կարելի է մեկնաբանել՝ որպես ամբողջ Մերձավոր Արևելքում Փարիզի ազդեցության տարրերը վերականգնելու փորձ, որոնք Ֆրանսիան հաջորդաբար կորցրել էր սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից մինչև «Արաբական գարնան» արդյունքները, որոնք վերջ դրեցին Հինգերորդ հանրապետության լայնատարած ներկայությանը Լիբանանի և Սիրիայի քաղաքական կյանքում: Այսպիսով, Ֆրանսիան ձգտում է ևս մեկ անգամ տեղ գրավել իր դարավոր շահերի գոտում՝ օգտագործելով իր արտաքին քաղաքականության ամենահեռանկարային ուղղությունները Մեծ Մերձավոր Արևելքում:

Հարկ է նշել նաև, որ Մակրոնը նման հստակ ուղերձով է հանդես եկել անմիջապես այն բանից հետո, երբ երկրի լայն հասարակայնությունն ու աշխարհը տեղեկացան Խարկովում զոհված ֆրանսիացի զինվորականների մասին: Բռնկված խայտառակ իրադարձության ֆոնին նախագահը հասկացրել է, որ տեղի ունեցածը այս կամ այն ձևով չի ազդի համաշխարհային հակամարտությունների գոտիներում Հանրապետության հետագա ակտիվ մասնակցություն ունենալու մտադրության վրա, եթե այդ վայրերը Փարիզի համար ունեն ռազմաքաղաքական նշանակություն: